

BA

127


A3

UC-NRLF



B 3 472 350

GIFT OF
HORACE W. CARPENTIER



EX LIBRIS

CONVERTED

ՊԵՏՐՈՎԱԾՆՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ

ԵԿԵԼԵՑԻՈՅ .

ՀԱՅԵՐԷՆ Է ԱՆԳՂԻՆԵՐԷՆ :

LITURGY

OF THE

Holy Apostolic Church of Armenia.

ARMENIAN AND ENGLISH.

ԼՈՆԴՈՆ—LONDON.

—
1887.

Armenian church

ՊԵՏԵՐԵՎԵՍԻԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑԻՈՅ .

ՀԱՅԵՐԷՆ Է ԱՆԳՂԻԵՐԷՆ :

LITURGY

OF THE

Holy Apostolic Church of Armenia.

ARMENIAN AND ENGLISH.

ԼՈՆԴՈՆ—LONDON.

1887.

BOX 127

A3

CARPENTIER

247

ՆՈՒԷՐԻՔ

Ի ՆՊԱՍՏ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՍՍ.

Բարեպաշտ ոմն նուիրեաց . . . 20 սկի Մեդլ:

Մ.Մ. ոմն բարեպաշտ նուիրեաց . . . 12 „

Ե. Գ. Պ.

Պատարագամատոյցս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ. երկիցս թարգմանեցաւ յԱնգլիական բարբառ 'ի նոցունց իսկ Անգղիացի եկեղեցականաց. նախ 'ի ձեռն գերապատիւ Ս. Ա. Բլակմօրի՝ 'ի վերայ Ռուսական թարգմանութեանն, զոր արարեալ էր Երկայնաբազուկ Իշխան Արղութեանց Յովսէփ Առքեպիսկոպոս Հայոց Ռուսիոյ, և երկրորդանգամ՝ 'ի ձեռն գերապատիւ Ս. Կ. Սալանի. Ա. Ա. Երբեմն Առաջնորդ 'ի Բրօզվինձըր, 'ի վերայ Հայ բնագրին տպագրելոյ 'ի Կոստանդնուպօլիս հրամանաւ Պօղոս Պատրիարքի Անգրիանուպօլսեցւոյ: Կրկին թարգմանութիւնքն այնոքիկ, թէպէտև կրկնակի տպագրութեամբք երեւեցան մինչև ցայժմ, այլ առանձինն. բայց արդ ունելով մեր պատճառս բազումս, կարևոր դատեցաք զՀայ բնագրին 'ի միասին ընդ Անգղիական թարգմանութեանն 'ի մի գրքոյկ տալ տպագրել:

Յաղագս Հայ բնագրին առաջնորդ կալաք մեզ ղերկուս օրինակս Խորհրդատեսարից տպագրելոց մին 'ի Օմիւռին քաղաքի յամի Տեառն 1761, և միւսն յԵրուսաղէմ յամին 1873, մոճեալ 'ի նա 'ի կարգէ Վամամտիցն և Շարականաց և Սրբասացութեանց զայնպիսիս միայն, զորս բաւական համարեցաք 'ի խորհուրդ ընդհանուր եթէ սօճական և եթէ լուր աւուրց: Իսկ յաղագս Անգղիականին՝ թէ ըստ

NOTICE.

THE Liturgy of the Holy Apostolic Church of Armenia has already been twice translated into English by English clergymen; first by the late Rev. R. W. Blackmore from a Russian translation made by Dolgoroucki Prince Joseph Arghouthiants, Armenian Archbishop in Russia; and secondly by the Rev. S. C. Malan, D.D., formerly Vicar of Broadwindsor, from the Armenian original printed at Constantinople by command of the Patriarch Paul of Adrianople; and each of these versions has passed through two editions. Owing, however, to many circumstances, I have been urged to prepare a Manual which should contain the Armenian original together with an English translation.

For the original I have used, as guides, copies of two Missals, one printed in the city of Smyrna in 1761, and the other in Jerusalem in 1873, inserting a set of proper portions, namely, Introits, Hymns, and Trisagions, which may serve alike for festivals and ordinary days; and for the English I have selected the second of the above mentioned translations, on account of its fidelity and style, the venerable translator having given me permission to use the same, and expressed his willingness to assist me during the printing; which promise he has

Հաւատարմութեանն և թէ ըստ ոճոյն, յերկուց
թարգմանութեանց անտի, երկրորդաւն ընտրեցաք
վարել. առ որ ոչ միայն զկամակարն հաճութիւն ետ
մեզ մեծարու թարգմանիչն, սյլ և յաւել զպատրաս-
տականութիւն իւր յաջակցութիւն տպագրութեանս.
Կոր կատարեաց սիրով, վերստին ակնարկելով 'ի
նախկին իւր թարգմանութիւնն և նորոգ թարգ-
մանելով զըստ պատշաճիսն եղեալս 'ի մէնջ: Այս
բարեմիտն նորա ծառայութիւն պարտս մեծի շնորհաց
եզ 'ի վերայ մեր:

ԵՍԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՈՒԱԾԱՏԻԵԱՆՑ:

fulfilled, kindly revising his former translation and newly translating the proper portions which have been given by me. For whose help and hearty co-operation I am greatly indebted.

ARCHIMANDRITE ESSAÏE
ASDVADZADOURIANTS.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Վրիստոս . ամէն :

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի : Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր . և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց . և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն . այլ փրկեա զմեզ 'ի չարէ : Օհի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս . ամէն :

Օսաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն Մստուած 'ի հաճոյս բարերար կամաց իւրոց . մեր մեղացն և բազում յանցանացն թողութիւն շնորհեսցէ . 'ի չարեաց փրկեսցէ . 'ի մեղաց պահեսցէ . և նմա փառք յաւիտեանս . ամէն :

Blessed be our Lord Jesus Christ. Amen.

Our Father, which art in heaven, hallowed be Thy name. Thy kingdom come. Thy will be done on earth as it is in heaven. Give us this day our daily bread, and forgive us our trespasses, as we forgive them that trespass against us; and lead us not into temptation; but deliver us from evil. For Thine is the kingdom, and the power and the glory, for ever and ever. Amen.

May God, the lover of man, accept our psalmodies and supplications according to His beneficent will. May He grant forgiveness of our sins and great transgressions, deliver us from evil, and save us from our sins; and let there be glory to Him for ever. Amen.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

ՊԵՏԱՐԵԳՆԵՍԵՏՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ
ԵԿԵԼԵՑԻՈՅ .

LITURGY

OF THE

Holy Apostolic Church of Armenia.

ՕՐԷՆՔ ԵՐԿԸՆԵԼՈՅ ՍՊԸՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ :

Յընձամ իմեցե՛ք հանապա՛ստ պարտա՛գատները . պարտե՛ք այժմ
ե՛րեւրդե՛ք զգե՛սքա՛սրելը : Մոյ՛ք յա՛նբարո՛ւնն հան-
դերէ՛յ սա՛րկա՛գոհն . ս-ը զգե՛սքս՛ն է՛ն պարտա՛գետ : Ե-
զգեցե՛ք զաշխո՛նեկեցն՝ ըսո՛ր է-րա՛տնչէ՛ր սարե՛ճանէ՛ . սասոցե՛ն
սպա՛ . Սաղմո՛ս . ՃԼա՛ . Էջո՛ւրդ :

Վահանայք թո զգեցցին զարդարութիւն . և սուրբք
թո ցնծարով ցնծասցին :

Յիշեա՛, տէր, զՎաւիթ . և զամենայն հեղութիւն
նորա :

Որպէս երգուաւ տեառն . և ուխտս եղ Մատուծոյ
Յակովբայ :

Թէ՛ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ . թէ՛ ելից յան-
կողինս մահճաց իմոց :

Թէ՛ տաց քուն աչաց իմոց . կամ նինջ արտեանաց
իմոց . կամ հանգիստ իրանաց իմոց . մինչև գտից
զտեղի յարկի տեառն Մատուծոյ Յակովբայ :

Ահա՛ լուաք զնմանէ յԵփրաթայ . և գտաք զնա 'ի
դաշտս մայրեաց :

Մտցուք 'ի յարկս նորա . երկրպագցուք 'ի տեղ-
ւոջ, ուր կացեալ են ոտք նորա :

Արի՛, Տէր, 'ի հանգիստ թո . դու և տապանակ կտակի
սրբութեան թո :

THE ORDER OF MINISTRATION IN THE CHURCH.

When the Priest intends to offer the oblation, he must put on vestments suitable for the service. With the deacons, therefore, he goes into vestry, where the vestments are kept. Then the several ministers being appavelled, every one according to his order, they shall say, in antiphon, Psalm cxxxii. •

Let Thy priests be clothed with righteousness, and let Thy saints sing with joyfulness.

Lord, remember David, and all his trouble.

How he sware unto the Lord, and vowed unto the mighty God of Jacob.

Surely I will not come into the tabernacle of my house, nor go up into my bed ;

I will not give sleep to mine eyes, nor slumber to mine eyelids, neither any rest to my body, until I find out a place for the Lord, an habitation for the mighty God of Jacob.

Lo, we heard of it at Ephratah : we found it in the fields of the wood.

We will go into His tabernacle : we will worship at his foot-stool.

Arise, O Lord, into Thy resting place ; Thou and the Ark of the covenant of Thy holiness.

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն . և սուրբք
քո ցնծալով ցնծասցեն :

Ս ան Ղաւթի սիրելոյ քո . մի դարձուցաներ
զերեսս քո յօծելոյ քումմէ :

Երդուաւ տէր Ղաւթի ճշմարտութեամբ և ոչ
ստեաց նսա . 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել
յաթող նորա :

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայու-
թիւնս իմ զոր ուսուցից նոցա :

Որդիքնոցանստցին յաւիտեանս յաւիտենից յաթող
քո :

Հաճեցաւ Տէր ընդ Սիօն . և ընտրեաց բնակիլ 'ի
նմա . ասէ . ա՛յս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտե-
նից . 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա :

Չայրիս սորա օրհնելով օրհնեցից . և զաղբատս
սորա լցուցից հացիւ :

Երիցանց սորա զգեցուցի զվերկութիւն . և սուրբք
սորա ցնծալով ցնծասցեն :

Ընդ ծագեցից եղջիւր 'ի Ղաւթի . պատրաստ
արարից զճրագ օծելոյ իմոյ :

Թշնամեաց սորա զգեցուցից զամօթ . և 'ի վերայ
նորա ծաղկեսցի սրբութիւն իմ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ .

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Ե- Սուրբազն տրոպեոցէ :

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք :

Let Thy priests be clothed with righteousness ; and let Thy saints shout for joy.

For Thy servant David's sake, turn not away the face of Thine Anointed.

The Lord hath sworn in truth unto David ; He will not turn from it : Of the fruit of thy body will I set upon thy throne.

If thy children will keep my covenant and my testimonies that I shall teach them :

Their children shall also sit upon thy throne for evermore.

For the Lord hath liked Sion : He hath chosen it for His habitation. This is my rest for ever : here will I dwell ; for I have taken pleasure in it.

I will abundantly bless her provisions : I will satisfy her poor with bread.

I will also clothe her priests with salvation : and her saints shall shout aloud for joy.

There will I make the horn of David to flourish : I have ordained a lamp for mine Anointed.

His enemies will I clothe with shame : but upon himself shall my holiness flourish.

Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost.

Now and for ever, world without end. Amen.

The Deacon, aloud.

Let us pray to the Lord in peace.

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տե-
առնէ. զի զողորմութեան զշնորհն իւր արասցէ 'ի
վերայ մեր. ամենակալ Տէր Աստուած մեր. կէցուցէ
և ողորմեսցի :

Ե- «սուգե՛ն երէնդասն Տէր ողորմոյ» :

Աղօթք սուգեալսն պարտեալէ Քահանայն յառաջ շան զգետ-
րաւորէն :

Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ Տէր մեր
Յիսուս Վրիստոս : Անճառելի խոնարհութեամբ
յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար : Որ եղեր
քահանայապետ յաւիտենից ըստ կարգին մեւքիսեդեկի
և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ : Տէր ամենակալ,
որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ :
Արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան
ծառայս քո : Որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն
հոգևոր պաշտօն փառաց քոց : Որպէս զի զամենայն
ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծու-
թեան, և զարդարեցայց լուսով քով. ընկեա՛ յինէն
զչարիս իմ, և թօթափեա՛ զյանցանս իմ. որպէս զի
արժանի եղեց հանդերձեալ լուսոյդ առ 'ի քէն :
Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել 'ի
պաշտօն սրբութեանց քոց, ընդ այնոսիկ՝ որք անմե-
ղութեամբ պահեցին զպատուիրանս քո : Օ, ի և ես
պատրաստ գտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաս-
տուն կուսանան. փառաւորել զքեզ Վրիստոս, որ
բարձեր զմեզս ամենեցուն : Օ, ի դու ես սրբութիւն
անձանց մերոց և քեզ բարերարիդ Աստուծոյ վայել է

Let us ask the Lord in faith, and with one accord, that He will bestow on us the grace of His mercy. The Lord Almighty, our God, will save us, and have mercy upon us.

Then to be said, twelve times, "Lord have mercy upon us."

Private prayers of the Celebrant Priest before putting on his robes.

O Lord Jesu Christ, who art clothed with light as with a garment, Thou didst appear on earth in unspeakable humility, and didst converse with men. Thou who wast made eternal High Priest after the order of Melchisedec, and who didst adorn Thy Holy Church; O Lord Almighty, who hast vouchsafed unto us to put on that same heavenly garment, fit me, Thine unworthy servant, at this hour, when I venture to draw nigh to this spiritual service of Thy glory. Wherefore, in order that I be stripped of the defiled garment of all ungodliness, and that I be adorned with Thy light, remove my wickedness from me, and blot out my transgressions, that I be made worthy of the light Thou hast prepared for me. Grant me to enter with priestly glory upon the ministry of Thy holy things, in company with those who have kept Thy commandments without sin. So that I also be found prepared for the heavenly marriage feast with the wise virgins; there to glorify Thee, O Christ, who didst take away the sins of all men. For Thou art the holiness of our persons, and

փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Եւ հարսուցեալ սարկաւազսն, զգեցոսցեն նա զհանդերձս
ստեղծ :

Ես ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք . ընկալ
կեցո՛ղ և ողորմեա՛ :

Վահանայն : Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից . ամէն :

Եւ յետ օրհնութեան, գեցե յաւազ զխոյնն ՚ն գլխին և սասցէ :

Վեր, Տէր, սաղաւարտ փրկութեան ՚ի գլուխ իմ .
պատերազմիլ ընդ զօրութիւնս թշնամւոյն . շնորհօք
Տեառն մերոյ Յիսուսի Վրիտտոսի . որում վայել է
փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Հապլին :

Օգբեցո՛ղ, Տէր, ինձ հանդերձ փրկութեան, և պատ-
մուծան ուրախութեան . և շուրջ պատեա՛ զզգեստովս
փրկութեան . շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիտ-
տոսի :"

Փորուրբէն :

Օգբեցո՛ղ, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն .
և սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց .
շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիտտոսի :"

Գօրոսյն :

Եւ շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի

unto Thee, O beneficent God, belong glory, dominion, and honour, now and ever, world without end. Amen.

Then the Deacons drawing near, shall robe him, saying,

Let us pray to the Lord in peace. Receive us, save us, and have mercy upon us [O Lord].

The Priest. Blessing and glory to the Father, and to the Son, and to the Holy Ghost, now and ever, world without end. Amen.

After the blessing he shall first put the mitre upon his head, and say,

Lord, put upon me the helmet of salvation, that with strength I may fight the enemy. By the grace of our Lord Jesus Christ; unto whom belong glory, dominion, and honour; now and ever, world without end. Amen.

For the Albe.

Clothe me, O Lord, with the garment of salvation, and with the robe of joyfulness; and surround me with vesture of salvation. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the Stole.

Clothe my neck, O Lord, with righteousness, and cleanse my heart from all defilement of sin. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the Girdle.

Let the girdle of faith, bound in the middle of my

իմոյ և մտացս . և շիջուսցէ 'ի սոցանէ զխորհուրդս
աղտեղիս . և զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ
բնակեսցի 'ի սոսա . շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի
Վրիստոսի :"

Աջ Բաղդանին :

Տուր, Տէր, զօրութիւն աջոյ ձեռին իմոյ, և լուսն
զամենայն աղտեղութիւնս իմ . որպէս զի կարող
լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ
և մարմնոյ . շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիս-
տոսի :"

Ահեռի Բաղդանին :

Տուր, Տէր, զօրութիւն ձախոյ ձեռին իմոյ, և լուսն
զամենայն աղտեղութիւնս իմ . որպէս զի կարող
լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ
և մարմնոյ . շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի :"

Աւետիստին :

Օգեցո՛, Տէր, պարանոցի ոյ զարդարութիւն ,
և սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց .
շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի :"

Նախորդին՝ որ է շնորհաց :

Տէր, ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ
և պարսպեա՛ ընդգէմ՝ ներգործութեան չարին . զի
արժանի եղևց փառաւորել զքո փառաւորեալ անունդ .
շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի :"

heart and of my mind, wipe off from them the thought of impurity; and cause the power of Thy grace to abide in them at all times. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the right Maniple.

Give strength, O Lord, to my right hand, and wash away all my filthiness; that I be enabled to wait on Thee in cleanness of mind and body. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the left Maniple.

Give strength, O Lord, to my left hand and wash away all my filthiness; that I be enabled to wait on Thee in cleanness of mind and body. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the Vagas (Ephod).

Clothe my neck, O Lord, with righteousness, and cleanse my heart from all filthiness of sin. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the Chasuble.

Lord, of Thy mercy, clothe me with a bright garment, and protect me against the wiles of the wicked; that I be counted worthy to glorify Thy glorious name. By the grace of our Lord Jesus Christ, etc.

Յե՛ր զգե՛ս Կրիստոսի, Կրիստոսի զգե՛ս Կրիստոսի :

Յնձասցէ անձն իմ՝ ՚ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ
փրկութեան և պատմուճան ուրախութեան . իբրև
փեսայի եղ ինձ պսակ . և որպէս զհարսն զարդու
զարդարեաց զիս . շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի
Վրիստոսի :՝

Թաշխնախն :

Արբե՛ս, Տէ՛ր, զձեռս իմ յամենայն աղտեղութենէ
մեղաց . շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի :՝

Մենչ Բահանան զգե՛ս, Գլխիս երգե՛ն զյո շարուն :

Խորհուրդ խորին անհաս անսկիզբն . որ զարդարեցեր
զվերին պետութիւնդ . ՚ի յառազաստ անմատոյց լու-
սոյն . դերապանձ փառօք զգասս հրեղինաց :

Անձառահրաշ զօրութեամբ . ստեղծեր զՂդամ
պատկեր տիրական . և նազելի փառօք զգեստաւորեցեր .
՚ի դրախտն աղենի տեղի բերկրանաց :

Չարչարնօք քո սուրբ միածնին . նորոգեցան արա-
րածք ամենայն . և վերստին մարդն անմահացաւ .
զարդարեալ ՚ի զգեստ անկողոպտելի :

Անձրևածին բաժակ հրահոսան . որ հեղար յԱռա-
քեալն ՚ի սուրբ վերնատանն . հեղ և ՚ի մեղ Հոգիդ
սուրբ Աստուած . ընդ պատմուճանի զքո զիմաստու-
թիւն :

Տան քում վայելէ սրբութիւն . որ զդեցար զվա-

After having put on all his vestments, the Priest shall say,

My soul shall rejoice in the Lord, because He has clothed me with a garment of salvation, and with a vesture of gladness; He has put upon me a crown as upon a bridegroom, and has adorned me like a bride with her jewels. By the grace of our Lord Jesus Christ, etc.

For the Towel.

Cleanse my hands, O Lord, from all filthiness of sin. By the grace of our Lord Jesus Christ, etc.

While the Priest is robing, the choir sing this hymn :

O mystery, deep, unsearchable, eternal! Who hast set up Thy dwelling in light, which no man can approach unto, in splendid glory of brilliant heavenly spirits :

With wonderful power didst Thou create Adam a lordly figure, and didst clothe him in glorious attire in the garden of Eden, the abode of delights ;

Through the sufferings of Thine only Begotten, Thou hast received all creatures, and again hast made man immortal, clad in a garment which no one can take from him.

O chalice of rain of fire, that fell on the Apostles in the holy upper chamber ; O God, pour Thy Holy Spirit on us also, together with the garment of Thy wisdom.

Holiness becometh Thy house, who art clothed in

յելչութիւն . սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ .
պատեան՝ զմէջս մեր ճշմարտութեամբ :

Որ զսրարչագործ բազուկս քո . տարածեցեր ընդ-
դէմ աստեղաց . հաստատեան՝ զբազուկս մեր կարողու-
թեամբ . համբարձմամբ՝ ձեռաց առքեղ միջնորդիլ :

Ի իւսմամբ թագ 'ի գլուխ . պատեսցես զմիտս և
զգայարանս . խաչանիշ ուրարամբ ըստ Ահարովի .
ծաղկեալ յոսկեթել 'ի զարդ խորանի :

Բամից բոլորից տիրայէս Աստուածպետական .
նախորտապատ սիրով զմեղ զգեստաւորեցեր . քում
սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր :

Թագաւոր երկնաւոր . զեկեղեցի քո անշարժ պա-
հեան . և զերկրպագուս անուանդ քում . պահեան՝ 'ի
խաղաղութեան :

Ե- ելեոյցեն արեւ Սեղանոյն : Ե- Բահանոյն Լուսոյց
դէմս ասելով . Սուրբ . Իե . Էրուդ :

Լուսոցից սրբութեամբ զձեռս իմ . և շուրջ եղեց
զսեղանով քով Տէր :

Ղատ արա ինձ , Տէր , զի ես յամբժուութեան իմում
գնացի . 'ի Տէր յուսացայ , զի մի՛ եղեց հիւանդ :

Փորձեան զիս , Տէր , և քննեան զիս . փորձեան՝ զերկա-
մունս իմ և զսիրտ իմ .

Ողորմութիւն քո , Տէր , առաջի աչաց իմոց . և հաճոյ
եղեց ճշմարտութեան քում :

majesty. As thou art surrounded with the beauty of holiness, so also gird us about with truth.

Thou who didst spread Thy creating arms to the stars, strengthen our arms with power, to intercede when we lift up our hands unto Thee.

Bind our thoughts and our senses as the veft of this tire binds our head, and let this crosswise stole embroidered with golden flowers, like that of Aaron, be for the honour of the Sanctuary.

Supreme, divine Sovereign of countless multitudes, clothe us in the tunic of love, in order to fit us for the due ministration of Thy mysteries.

Heavenly King, keep Thy church immoveable, and maintain in peace the worshippers of Thy Holy Name.

Then they all step in front of the Holy Table, and the Priest washes his hands, saying Psalm xxvi. [in antiphon].

I will wash my hands in innocency ; so will I compass Thine altar, O Lord.

Judge me, O Lord, for I have walked in mine integrity : I have trusted also in the Lord without wavering.

Examine me, O Lord, and prove me ; try my reins and my heart.

For Thy loving-kindness is before mine eyes ; and I have walked in Thy truth.

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց . և ընդ անօրէնս
ես ոչ մտից :

Ատեցի ես զժողովս չարաց . և ընդ ամբարիշտս ես
ոչ նստայց .

Առաջից սրբութեամբ զձեռս իմ . և շուրջ եղեց
զսեղանով քով Տէր :

Ասել ինձ զձայն օրհնութեան քո . և պատմել
զամենայն սքանչելիս քո :

Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո . և զտեղի
յարկի փառաց քոց :

Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ . և
մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ :

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են . և աջ
նոցա լի է կաշառօք :

Ես յամբժութեան իմում գնացի . փրկեա՛ զիս,
Տէր, և ողորմեա՛ ինձ :

Ոսն իմ կացցէ յուղղութեան . յեկեղեցիս մեծս
օրհնեցից զքեզ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ .

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Վահանայն : Ես վասն սրբուհւոյ Աստուածածինի
բարեխօսութեանն, Տէր, ընկա՛լ, զաղաչանս մեր և
կեցո՛ զմեզ :

Սարգիս-ափն : Սուրբ զԱստուածածինն և զամենայն

I shall not sit with vain persons : neither will I go in with the wicked.

I hate the congregation of evil-doers, and I will not sit with the ungodly.

I will wash my hands in innocency, so will I compass Thine altar, O Lord.

That I may cause the voice of thanksgiving to be heard, and tell of all Thy wondrous works.

Lord, I have loved the habitation of Thy house ; and the place where Thy glory dwelleth.

Gather not my soul with sinners, nor my life with men of blood :

In whose hands is mischief, and their right hand is full of bribes.

But as for me, I will walk in mine integrity : redeem me and be merciful unto me.

My foot standeth in an even place : In the congregations will I bless the Lord.

Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost.

Now and ever, world without end. Amen.

The Priest. For the sake of the Holy Mother of God, O Lord, accept our supplications, and save us alive.

The Deacon. Let us make the Holy Mother of God

սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս .
զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուցէ զա-
րարածս իւր : Ամենակալ Տէր Աստուած մեր . կեցո՛
և ողորմիա՛ :

Վահանայն : Անկալ, Տէր, զաղաչանս մեր բարե-
խօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին անարատ
ծնողի միածնի Որդւոյ քո . և աղաչանօք ամենայն սրբոց
քոց : Առն մեզ Տէր, և ողորմեա՛ . ներեա՛ քաւեա՛ և
թող զմեզս մեր : Արժանաւորեա՛ գոհութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ .
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Եւ գարտաւար զառ շողովորդն . շարունակեալսն :

Խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհւոյ Աստ-
ուածածնին . և առաջի ամենայն սրբոց . և առաջի
ձեր Հորք և եղբարք . զամենայն մեզս զոր գործեալ եմ .
քանզի մեղայ խորհրդով բանիւ և գործով . և ամե-
նայն մեղօք՝ զոր գործեն մարդիկ, մեղայ . մեղայ աղա-
չեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողու-
թիւն :

Պարտախոսեացեն որք Ռեբյն են :

Ողորմեսցի քեզ Աստուած Հզօրն . և թողութիւն
չնորհեսցէ ամենայն յանցանաց քոց . անցելոյն և
այժմուս . և յառաջիկայէն փրկեսցէ և հաստատեսցէ

and all the saints, our intercessors with the Father in Heaven, that He will be pleased to have mercy, and, in his pity, to save alive his creatures. Almighty Lord God, save us, and have mercy on us.

The Priest. Receive, O Lord, our supplications through the intercession of the Holy Mother of God, the Immaculate Mother of Thine only begotten Son, and through the entreaties of all Thy saints. Hear us, O Lord, and have mercy [on us]; bear with us, put away our offences, and forgive us our sins, and make us worthy, with praises, to glorify Thee, with Thy Son, and the Holy Ghost; now and ever, world without end. Amen.

Then, turning towards the congregation, he says,

I confess before God, and the Holy Mother of God, and before all the Saints, and before you, father and brethren, all the sins I have committed. For I have sinned in thought, word, and deed, and with every sin committed by men; I have sinned, sinned, I pray ye, entreat God for me.

The bystanders [Clerks] shall answer,

Let God Almighty, have mercy on thee, and grant thee forgiveness of all thy trespasses, past and present; let Him deliver thee from those that are to come;

յամենայն գործս բարիս . և հանդուսցէ զքեզ 'ի հան-
եալ կեանսն . ամէն :

Պատասխանէ և էնքն :

Աղատեսցէ և զձեզ մարդասէրն Աստուած . և
թողցէ զյամենայն յանցանս ձեր . տացէ ժամանակ
ապաշխարելոյ և գործելոյ զբարիս . ուղղեսցէ և
զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն
հզօրն և ողորմածն . և նմա փառք յաւիտեանս . ամէն :

Գուրբն : Յիշեսցիր և զմեզ առաջի անմահ գառին
Աստուծոյ :

Վահանայն : Յիշեալ լիջիք առաջի անմահ գառին
Աստուծոյ :

Գուրբն . Սուղնս . զԹ . ինն :

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր . ծառա-
յեցէք Տեառն ուրախութեամբ :

Մտէք առաջի նորա ցնծութեամբ . ծաներուք զի
նա է Տէր Աստուած մեր :

Նա արար զմեզ , և ոչ մեք էաք . մեք ժողո-
վուրդ և խաչն արօտի նորա :

Մտէք ընդ գրունս նորա խոստովանութեամբ . և
օրհնութեամբ 'ի յարկս նորա :

Խոստովան եղերո՞ւք Տեառն . և օրհնեցէք զանուն
նորա :

Վաղցր է Տէր , յաւիտեան է ողորմութիւն նորա .
յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա :

confirm thee in every good work, and give thee rest in life everlasting. Amen.

To which the Priest replies :

Let God who loves men, set you also free, and forgive you your trespasses ; give you time for repentance, and for the practice of good works ; and be pleased to direct your future life, through the grace of the Holy Ghost, who is both mighty and pitiful ; and unto whom be glory for ever. Amen.

The Clerks. Remember us before the immortal Lamb of God.

The Priest. You shall be remembered in presence of the immortal Lamb of God.

The Clerks then say Psalm c. in antiphon.

Make a joyful noise unto the Lord, all ye lands :
serve the Lord with gladness :

Come before His presence with singing : know ye
that the Lord He is God.

It is He that hath made us, and not we ourselves ;
we are His people, and the sheep of His pasture.

Enter into His gates with thanksgiving, and into
His courts with praise.

Give thanks unto Him, and bless His name.

For the Lord is good ; His mercy endureth for ever ;
and His faithfulness unto all generations.

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Առբխտագն յարողէ : Սուրբ եկեղեցեալս աղա-
չեսցուք զՏէր . զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց
և կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ . Ամենակալ
Տէր Աստուած մեր . կեցո՛ և ողորմեա՛ :

Վահանայն : Ի մէջ տաճարիս և առաջի աստուած-
ընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ
տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք .
սուրբ և զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո
փառաւորեմք , և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և
զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ . այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Քահանայն ասացէ Սուրբ . իբ . իցրդ . և եւցէ 'ե խորանն :

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած .
որ ուրախ առնէ զմանկութիւն իմ :

Առբխտագն : Ղանտ արա ինձ Աստուած . և իրաւ
արա ինձ 'ի դատաստանի իմո՛ւմ :

Յազգէ , որ ոչ է սուրբ . 'ի մարդոյ մեղաւորէ
նենգաւորէ փրկեա զիս :

Ղու Աստուած հզօրիչ իմ ես . ընդէր՞ մոռացար
զիս . ընդէր՞ տրտում դնամ ես 'ի նեղել թշնամւոյ
իմոյ :

Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost.

Now and ever, world without end. Amen.

The Deacon, aloud. In the name of Holy Church do we pray the Lord, that through her He will save us from [our] sins, and keep us alive through the grace of His mercy. O our Lord God Almighty, save us alive, and have mercy [on us].

The Priest. In the midst of Thy temple [O Lord], and in presence of these bright and holy tokens acceptable unto God, and of this holy place, do we humble ourselves in fear and worship, and glorify Thy holy, wonderful, and supreme authority. And unto Thee do we offer blessing and glory with the Father, and the Holy Ghost, now and ever, world without end. Amen.

The Priest saying Psalm xliii. [in antiphon], goes up to the Altar.

I will go unto the Altar of God; even unto the God of the joy of my youth.

The Deacon. Judge me, O God, and plead my cause against an ungodly nation :

O deliver me from the deceitful and unjust man.

For thou art the God of my strength ; why hast thou cast me off? Why go I mourning because of the oppression of the enemy ?

Առաքեա՛, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո .
զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս 'ի լեառն սուրբ
և 'ի յարկս քո :

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած . որ
ուրախ առնէ զմանկութիւն իմ :

Խոստովան եղեց քեզ օրհնութեամբ . Աստուած
Աստուած իմ :

Արդ՝ ընդէր^Ը տրտում՝ ես անձն իմ . կամ ընդէր^Ը
խռովես զիս . յուսա՛ առ Աստուած , խոստովանեա՛
նմա . փրկիչ երեսաց իմոց Աստուած է :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ .

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Սարկաւո՛ւս Կաթողիկոս Կաթողիկոս : Եւ ևս խաղաղութեան զՏէր
աղաչեսցուք . Օրհնեսցուք զհայր Տեառն մերոյ
Յիսուսի Վրիստոսի , որ արժանի արար զմեզ կալ 'ի
տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգևորս :
Ամենակալ Տէր Աստուած մեր . կեցո՛ւ և ողորմեա՛ :

Վահանայն : Ի յարկի սրբութեան և 'ի տեղւոջս
փառաբանութեան . հրեշտակաց բնակարանիս և մարդ-
կան քաւարանիս . առաջի Աստուածընկալ և պայծա-
ռացեալ սուրբնշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ
երկիւղիւ երկիրպագանեմք . զսուրբ և զհրաշալի և
զյաղթօղ զտէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք .

O send out Thy light and Thy truth; let them lead me: Let them bring me into Thy holy hill, and to Thy tabernacle.

Then will I go unto the altar of God, unto God who makes my youth joyful:

And upon the harp will I praise Thee, O God, my God.

Why art thou cast down, O my soul? And why art thou disquieted within me? Hope thou in God: for I shall yet praise him, who is the health of my countenance, and my God.

Glory be to the Father, and to to the Son, and to the Holy Ghost.

Now and ever, world without end. Amen.

The Deacon, aloud. Let us again pray to the Lord in peace; and bless the Father of our Lord Jesus Christ, who has counted us worthy to stand in the abode of praise, and to sing spiritual songs; Lord God Almighty, save us alive, and have mercy [on us].

The Priest. In this abode of holiness, and in the seat of praise, in this dwelling of angels, and of expiation for men, we fall down and, in awe, worship in presence of these glorious and divine tokens, and of the Holy Table, and we glorify Thy wonderful and sovereign Majesty. And unto Thee we give bless-

և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնու-
թիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հօգևոյդ Արքայ .
այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

[Յէր այս առթիւց, ծածիկ Սեղանն ձալազոտուաւ . և հայ Ռնչե-
ցաւորս ընծայեցն դիւելոյ : Իսկ ելեկ Եպիսկոպոս Է. յայնժամ
ծածիկ Սեղանն գինի հեղեւեալ երկուց Տեժ առթիւցն :]

Ե- Գլխերս երգեմ զՍեղեդի ըստ պարտաձեռնութեան . իմս զշարս .
իմնն ինչաբնութեան :

Իսկ ելեկ Եպիսկոպոս ընեցել խորհրտածոն . յայնժամ ձալազոտուաւ
ընծայեցն Սեղանս . և ՚ի ծոռնիս անկեալ յարտահոս արաստուօք ըստ
և անհոռնէ առասցի զաղօլն առ Սոբէ ոգն արեւելեց
գործոյն :

Գրեւորել նորեւոյնս :

Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից ,
յօրինող երեւոթից և աներեւոթից . փրկող և
հաստատող , խնամող և խաղաղարար , հօր հզօր
Հօգի . հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ
հեծութեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ : Ատ-
չիմք մեծաւ դողութեամբ սաստիկ երկիւղիւ մատու-
ցանելն յազանականս զայս պատարագ քում անղնին
զօրութեանդ . իբր անթողցի փառակցի և արար-
չակցի հայրենի անկապուտ պատուոյդ , քննողի ծած-
կութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ
էմմանուէլի զքեզ առաքչի փրկչի և կենդանատուի և
արարչի ամենեցուն : Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միանական Աստուածութեանդ .

ing and glory, with the Father and the Holy Ghost, now and ever, world without end. Amen.

[After these prayers the curtain is drawn, and remains so during the whole of the oblation. If the celebrant is a bishop, however, the curtain is drawn only after the two following great prayers].

Then the clerks sing the melody appointed for the day, or the hymn to be said at the censuring.

If the celebrant is a bishop, he draws over his breast the venerable omophorion; he then draws nigh to the table of offering, and there, falling on his knees, he says, privately, and his eyes streaming with tears, the following prayers to the Holy Ghost, who is the Agent and Dispenser [Steward or Economist] of the work.

Prayer of S. Gregory of Nareg.

O Almighty, beneficent God of all things and lover of men, creator of things visible and invisible, Saviour and Preserver, Protector, and Giver of Peace, Mighty Spirit of the Father, we entreat Thee with open arms, with humble earnest prayer in Thine awful presence. We draw nigh in great fear and trembling, in order to offer this reasonable sacrifice; first to Thine unsearchable power, being, as Thou art, equal in throne, in glory, and in Creative energy, with the unchangeable Majesty of the Father; and Searcher as Thou art also of the hidden, deep counsels of the Almighty Father of Emmanuel, who sent Thee, He who is the Preserver, Verifier, and Creator of all

յորոց մի և դու ճանաչիս անհաս : Վե՛ր ՚ի ձեռն քո
 առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք, տե-
 սանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգալոցան,
 զեղեալսն և զոչ գոյացեալսն անստուերաբար բար-
 բառով բանի վերապատուեցին : Հոգի Մստուածոյ՝
 քարոզեալ զքեզ Սոփսէսի . որ ՚ի գնալն քո ՚ի վերայ
 ջուրցն, անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկու-
 թեամբ տածողականաւ՝ թեապարտիակ պաշտպանու-
 ղօրէն գթասիրեալ ՚ի ծնունդս նորոգս, զաւազանին
 խորհուրդ ծանուցեր : Յոր կերպարան օրինակութե-
 ան՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մածուած վերջնում
 վարագուրիդ՝ յօրինեցեր կարող տիրապէս զբովան-
 դակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամե-
 նայն էից յանէից : Վե՛ր ստեղծանին ՚ի նորոգութիւն
 յարութեան ամենայն եղեալքս առ ՚ի քէն . յայնմ
 ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր
 առաջին երկրին կենդանեաց : Վե՛զ հնազանդեցաւ
 միութեամբ կամացն որպէս հօրն իւրում աղգակիցն
 քո, էակիցն հօր անդրանիկն որդի մերովս կերպիւ .
 զքեզ աւետարանեաց ճշմարիտ Մստուած հաւասար
 և համագոյ հօր իւր հզօրի . և զառ ՚ի քեզ հայհոյ-
 ութիւնն անբաւելի քարոզեաց, և իբր զՄստուածա-
 մարտիցն զքո հետտեղցն չարաբանական բերանս
 կարկեաց . և զիւրն շնորհեաց արդարն և անարատն
 գտիչն ամենայնի . որ վասն մեղաց մերոց մատնեցաւ,
 և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ : Վմա

things. Through Thee was made known to us the threefold personality in one essence of the Godhead ; of which Three Persons Thou art known as one incomprehensible. By Thee, and through Thee, did the first race of the patriarchal house, called Seers, declare aloud and clearly the things passed and to come. The Spirit of God announced Thee to Moses, even Thee, who, moving on the surface of the waters, as an energy which no one can restrain, and by Thy solemn going to and fro, while brooding over them, and under Thy sheltering wings fondly calling new beings into life, didst foreshadow the mystery wrought at Holy Baptism ; who, after this pattern, and ere the vault of the firmament above was spread on high, like a veil, didst, as Absolute Ruler, create the Complete Natures of all things that are, from all things that were not. In Thy creating power shall all men by Thee be renewed at the Resurrection, at the last day of this existence, but the first of heavenly life. Thee also did the Father's First-born Son, Thy fellow, and of the same essence with the Father, in one likeness, obey with oneness of will, as He did His Father. He announced Thee as the true God, equal and of the same substance as His Mighty Father ; He declared that blasphemy against Thee should never be forgiven, thus cutting short the railing accusations of Thine impious gainsayers, while He, the just

վառք 'ի ձեռն քո , և քեզ բարեբանութիւն ընդ Հօր
ամենակալի , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Դարձեալ ի բնեցեց 'ն նոյն կարգ Բանի , ինչև ձգտեալսն ձեր-
հայեցողսն լինան լուսոյ՝ հրաշապէս յայտնեացն ազդեալ . աւե-
րարեալ ձերսքն ի բնե՝ զեռազուսնսն :

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ
յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ .
անեղծ և անստեղծ անժամանակ Հոգւոյդ դթածի . որ
բարեխօսդ ես վասն մեր յանմուռնչ հեծութիւնս առ
ողորմածդ Հայր . որ զսուրբսն պահես , և զմեղուց-
եալն մաքրես և տաճարս կաղմես կենդանի և կեցուցիչ
կամաց բարձրեալդ Հօր : Արդ՝ աղատեա՛ զմեզ յամե-
նայն անմաքուր գործոց , որ ոչ է հաճոյ քուով բնա-
կութեան . և մի՛ շիջցին առ 'ի մենջ լուսոյդ շնորհաց
փայլմունք 'ի տեսականացս աչաց իմաստից , վասն զի
զքեզ ուսաք միանալ 'ի ձեռն աղօթից և ընտիր վարուց
խնկելոց : Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պա-
տարագի , և միւսդ ընդունի՛ հաճեալ ընդ մեզ հաշտա-
բար արեամբ անդրանկի իւրոյ . իսկ դու ընկալցիս
զմեր պաղատանս , և յարդարեսցես զմեզ օթեանս
պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայել-
լումն ճաշակման երկնաւոր դատինդ , առանց պատժոց
դատապարտութեան ընդունիլ զայս անմահացուցիչ

and innocent Creator of all, forgave His accusers ; He who for our sins was betrayed to death, and rose again for our justification. Unto Him be glory through Thee, unto Thee praise, blessing, with the Father Almighty, for ever and ever. Amen.

The same kind of earnest supplication shall again be repeated, until firm confidence, through the contemplation of [heavenly light], become wonderfully revealed ; signifying, and again boding, peace from above.

We entreat and beseech, with sighs and tears wrung from our innermost soul, Thy glorious and creative essence, neither brought into existence nor created, and not limited by time, O Merciful Spirit, who art our advocate with the Father of Mercies ! in groanings that cannot be uttered ; who keepest the spirits, and cleanseest sinners, and makest them temples of the living and quickening will of the exalted Father. Set us now free from all unclean deeds that are not agreeable to Thine indwelling [with us] ; so that the bright light of Thy gifts may not be quenched within us, from the contemplative eyes of our understanding ; that we may possess Thee in us, united with us by prayer, and the incense of a godly life. And since one of the Most Holy Trinity is being offered, and another takes pleasure in us through the Blood of His First-born Son that reconciles us to Him—do Thou, O Holy Spirit, receive

մանանայս կենաց նորոյ փրկութեան : Եւ հալւացի 'ի հրոյս յայսմանէ՝ գայթակղութիւնս մեր . որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունեւ լեացն մատուցման . զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս Որդուովդ Աստուծոյ Հօր քաղցրութիւն . որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան : Այո՛, այո՛, և ես մի եմ 'ի նոցանէ . և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի . շնորհօք քո ապրեալ, զարեամբ Վրիստոսի ստացեալս : Օյ յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո Աստուածութիւնդ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս և 'ի մի իշխանութիւն գովութեան :

Առբխտագն յայնեացէ : () րհնեա՛ Տէր :

Եպիսկոպոսն 'ի յայն : Օյ քո է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Ապա յորոնցեալ գայ առ ընծայարան Սեղանոյն, առ որ հարուցանէ նախաստրխագն զնշխարն . զոր առեալ պարտագինն գնէ 'ի հողակայն ասերով .

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի . Որ բազմեալ հանգչի յանարուեստ աթոռ . զմահ խոչի յանձն էառ վասն ազգի մարդկան . օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան :

our supplications, and make us a fit habitation for Thee, through every worthy preparation for the delicious tasting of the Heavenly Lamb; and without risk of condemnation, meet to receive this manna of immortality, of the life of a new salvation [recovery]. And let this fire consume every cause of offence in us, like the live coal brought to the lips of the prophet, by the angel holding the tongs; so that in every way Thy mercy and pity may be proclaimed, as the Father's loving-kindness manifested through the Son; who received the prodigal son, and brought him into the fatherly inheritance, and directed impure sinners to the Heavenly Kingdom, the bliss of the righteous. Yea, yea, I also am one of them; receive me, therefore, with them, as requiring great love and pity, destitute as I am of Thy graces purchased for me by the Blood of Christ. That in all this Thy Godhead be made manifest unto all, glorified together with the Father, in like honour, with one will, and in one power of praise.

The Deacon, aloud. Bless, O Lord!

The Bishop, aloud. For thine is the pity, the power, the charity, the strength, and the glory, for ever and ever. Amen.

He then, rising, comes to the table of oblation, where the Proto-deacon brings the wafer, which the celebrant takes, and places upon the paten, saying,

Memorial of our Lord Jesus Christ, who sits resting on a throne not made with hands. He gave Himself up to the death upon the Cross, for mankind; ✠ Praise Him, and bless Him, and extol Him, for ever and ever.

Եւ «Եւսու զԲնին», որչափ Եւսուիչ է «Եւսու» :

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Վրիստոսի . Որ 'ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք և անմահացան . օրհնեցէք զովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան :

Եւ «Եւսու զԲնին» 'ի ծածուի Յովնանու Ոսկեբերանին :

Տէր Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ զտէրն մեր Յիսուս Վրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի՛ առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ . ինքնին դու Տէր, օրհնեա՛ ի և այժմ՝ զառաջադրութիւնս զայս . ընկա՛լ զսա յերկնային քո սեղանդ : Յիշեա որպէս բարերար և մարգասէր զմատուցողս և վասն որոց մատուցանի : Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ 'ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց : Օ՛րի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Եւ «Եւսու զԲնին» Սոգոս . զդ :

Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ . զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած :

Հաստատեաց զաշխարհ՝ զի մի սասանեսցի . պատրաստ է աթոռ քո 'ի սկզբանէ յաւիտեանս զու ես :

Then, taking the wine, he pours it cross-wise into the Chalice, saying,

In remembrance of the saving dispensation of our Lord and Saviour Jesus Christ, through the fountain of whose Blood, flowing from His side, His creatures have been renewed and made immortal.

✠ Bless Him, and praise Him, and extol Him, for ever and ever.

Then shall he say, privately, this prayer of St. John Chrysostom.

